DOI: 10.54503/1829-4324.2024.1-182

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գևորգ Հովիկի Մարտիրոսյան

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 12.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Աշխարհում տեղի ունեցող տարբեր գործընթացների պատճառով ժողովուրդները անընդհատ գտնվել են շարունակական միգրացիայի մեջ, որից զերծ չի մնացել նաև հայ ժողովուրդը: Միջնադարում սելջուկ-թուրքերի արշավանքների արդյունքում հայ բնակչության մի մասը ստիպված է եղել լքել իրենց պատմական հողերը և բնակություն հաստատել Կիլիկիայում: 11-րդ դարից սկսած հայկական առաջին գաղթավայրերն են ստեղծվել Ղրիմում, Բելառուսում, Լեհաստանում և Հունգարիայում, որոնց մեծ մասը եղել են հայ արհեստավորներ և առևտրականներ: Աշխարհում հայկական սփյուռքի ձևավորմանը նպաստեց նաև 19-րդ դարի վերջին և 1915 թ.-ին տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը ժամանակակից Թուրքիայի տարածքում, որի արդյունքում ողջ մնացածները բնակություն հաստատեցին աշխարհի տարբեր անկյուններում: Խորհրդային միության տարիներին տեղի է ունեցել հայրենադարձության մի քանի ալիք, որից ամենամեծը տեղի է ունեցել 1946-1948թթ.-ին, որի ընթացքում հայրենիք է վերադարձել շուրջ 90 000-100 000 մարդ: Սպիտակի ավերիչ երկրաշարժի և ղարաբաղյան առաջին պատերազմի հետևանքով հայրենիքը լքեց բնակչության մի նշանակալից հատված: 1993-1994 թթ.-երի ընթացքում վերը թվարկված գործոնների ազդեցության հետևանքով ՀՀ-ն լքեցին ավելի քան 980 000 մարդ, իսկ վերադարձան 370 000 մարդ[1]:

Խնդիրը լինելով խիստ **արդիական**՝ հոդվածը **նպատակ** ունի անդրադառնալ ՀՀ բնակչության միգրացիայի առանձնահատկություններին և ներկայացնել դրանց հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները: Հոդվածում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**. ուսումնասիրել ՀՀ բնակչության հիմնական միգրացիոն ուղղությունները:

Գրականության վերլուծություն: Միգրացիոն գործընթացների մասին տեսականորեն առաջին անգամ խորը ուսումնասիրություն է կատարել Էռ. Գ. Ռավենշտեյնը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Ամերիկայի օրինակով: Նա միգրացիոն օրենքները սահմանել է հետևյալ կերպ. բնակչության այն մասը, որը լքել է տվյալ տարածքը, կարճ ժամանակահատվածում փոխարինվում է այդ տարածք ժամանող բնակչության մեկ այլ մասի հոսքով (հաճախ նաև օտարերկրացիների): Նրա համոզմամբ միգրացիայի համար հիմնական շարժիչ գործոնը տնտեսությունն է՝ պայմանավորված ենթակառուցվածքների, արդյունաբե-

[1] Խոջաբեկյան Վ., «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» // ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», Երևան, 2002թ., 526 էջ:

ության և տնտեսության այլ ճյուղերի զարգացման մակարդակով[1]: Միգրանտն այն անձն է, ով տեղափոխվում է մի պետությունից մյուսը և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող միջազգային միգրացիոն ծառայությունների կարիք ունի[2]:

Ներկայումս մասնագիտական գրականությունում նշվում է միգրացիայի հետևյալ երեք հիմնական պատճառները՝ աշխատանք, կրթություն և հանգիստ[3]: Վերը հիշատակված միգրացիայի տեսակների վրա Շ. Յ. Ակրամովի և Ֆ. Շ. Ակրամովի կարծիքով կարող են ազդել երեք մեգաթրենդներ, զգալի ազդեցություն են ունենալով առաջիկա 10-15 տարիների ընթացքում, որոնց ազդեցության ընդգրկման գոտին և չափերը հնարավոր չէ հստակորեն գնահատել: Հեղինակները նշում են հետևյալ մեգաթրենդները՝ շրջակա միջավայրի փոփոխություններ, աշխարհաքաղաքական անկայունություն, ժողովրդագրական փոփոխություններ և ապագա աշխատատեղերի հետ կապված խնդիրներ[4]: Բնակչության միգրացիոն գործընթացները ազդում են ոչ միայն միգրանտ արտահանող պետությունների, այլ նաև միգրանտներ ընդունող պետությունների աշխատանքային շուկայի վրա: Եվ. Ս. Կրասինեցը անդրադարձել է նման մի առանձնահատկության ՌԴ աշխատանքային շուկայի համար. ՌԴ տարածք աշխատանքային միգրանտների ներգրավումը լրացնում է այդ երկրի աշխատանքային ներուժի կորուստը և ապահովվում է ներքին տնտեսության ճյուղերի կայուն գործունեությունը[5], իսկ մյուս կողմից այն նվազեցնում է տվյալ երկրում միգրանտների կողմից կատարվող աշխատանքների վարձատրության չափը, ինչն էլ այդ երկրի աղքատ բնակչության համար ստեղծում է սոցիալական և արժանապատիվ վարձատրությամբ աշխատանք գտնելու հետ կապված խնդիրներ:

Մ. Ղարագյոզյանի կողմից իրականացված վերլուծությունը փաստում է, որ ՀՀ բնակչության արտագաղթի հիմնական պատճառներից են երկրում զբաղվածության ցածր մակարդակը, անձի ինքնադրսևորվելու ու զարգանալու, արժանապատիվ ապրելու և սեփական խնդիրները իրենց ուժերով լուծելու հնարավորությունների բացակայությունը[6]: ՀՀ բնակչության աշխատանքային էմիգրացիային պայմանավորված է նաև ՀՀ աշխատանքային շուկայում առկա խնդիրներով,

---

[1] Ravenstein E. G., “The laws of migration” // Journal of statistical society of London, Blackwell publishing for the Royal statistical society, Vol. 48, № 2, 1885, pp. 167-235.

[2] Continued effectiveness of the Organization in view of the new challenges: Doc. MC/1631 / Intergovernmental Committee for Migration. Geneva, 1989, pp. 12-14.

[3] Козлов Д.Т., Ханина А.В., “Анализ влияния миграционных потоков на национальную экономику (на примере Российской Федерации, стран Закавказья и Средней Азии)” // Экономические отношения, 2023, Том 13, № 2, с. 357.

[4] Акрамов Ш.Ю., Акрамов Ф.Ш., “Миграционная сфера в период цифровой трансформации государственных услуг и внедрения суперсервисов”, ЦИТИСЭ, 2022, № 3, с. 73.

[5] Красинец, Е.С., “Иностранная рабочая сила на российском рынке труда: проблемы и решения” // Народонаселение, 2020, Том 23, № 1, с. 111.

[6] Ղարագյոզյան Մ., «Միգրացիայի դրդապատճառները և սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում» // «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ հրատարակչություն», Երևան, 2014թ., 2(34), էջ 24:

որոնցից են արհմիությունների թույլ դերակատարությունը և բացակայությունը, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը, մասնագիտական վերապատրաստման դասընթացների բացակայությունը[1]:

2019թ.-ից ի վեր աշխարհում տեղի ունեցան մի քանի կարևոր իրադարձություններ՝ COVID-19, պատերազմներ (ռուս-ուկրաինական, հայ-ադրբեջանական, իսրաելապաղեստինյան), գլոբալ տաքացումներ և հրդեհներ, որոնք իրենց ազդեցությունն ունեցան ինչպես համաշխարհային, այնպես էլ լոկալ մասշտաբով: Միգրացիոն հետազոտությունների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետ Ի. Պ. Ցապենկոն նշում է, որ 2019թ.-ի համավարակի պատճառով բոլոր մարդկային հոսքերը կտրուկ նվազեցին[2]: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ուկրաինան լքել է շուրջ 12 միլիոն մարդ[3]: Փախստականների նույն իրավիճակն է ստեղծվել նաև վերը հիշատակված մյուս երկու պատերազմների պարագայում: Միգրացիայի խնդիրը այժմ առավել ևս արդիական է, իսկ գլոբալացման պատճառով դրա հետ կապված գործընթացներն ավելի արագ թափով են զարգանում:

Մեթոդաբանություն: Պետության համար բնակչության միգրացիայի հաշվարկման մեթոդաբանական գործիքներից է մարդահամարը, որի ժամանակ հաշվարկվում է մշտական և փաստացի բնակչության քանակը: Ժամանակավորապես բացակայող բնակչությունը ներառում է նրանց, ովքեր գրանցված են եղել որպես մշտական բնակիչ, բայց մարդահամարի պահին իրենց հիմնական բնակության վայրից բացակայել են 12 ամսից պակաս ժամկետով: Ժամանակավորապես ներկա բնակչությունը այն անձինք են, ովքեր մշտական բնակիչներ չեն եղել և մարդահամարի ժամանակ գտնվել են երկրում 12 ամսից պակաս ժամանակահատվածում[4]: ՀՀ բնակչությանը վերաբերող միգրացիայի համատեքստում առանձնահատուկ տեղ է գրավում աշխատանքային էմիգրացիան: Հոդվածում օգտագործվել են տարբեր երկրներում միգրանտների համար իրականացված մարդահամարի տվյալներ, իսկ մեր կողմից օգտագործված տվյալների հավաքագրման, համեմատման և վերլուծական մեթոդները օգնել են հասնել հոդվածում առաջադրված նպատակներին:

Վերլուծություն: Մ. Ա. Տրոյանսկայան իր կողմից ուսումնասիրված հեղինակների կարծիքների հիման վրա առաջարկել է միգրացիայի դասակարգումը ըստ հետևյալ առանձնահատկությունների՝ աշխարհագրական, ժամանակային, նպա-

---

[1] Ասատրյան Շ., «Աշխատանքի շուկան և զբաղվածության խնդիրները ՀՀ-ում» // «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2017թ., 7-8(203-204), էջ 83:

[2] Цапенко И.П., “Межстрановая мобильность населения в период и после эпидемического шока” // Социально-трудовые исследования, 2020, № 40(3), с. 41.

[3] Министерство финансов Украины. Электронный источник: https://minfin.com.ua/2023/01/19/99274157/:

[4] Эрм А., Пулен М., “Совершенствование статистики населения и миграции в Армении - текущая ситуация, планы на будущее и способы улучшения”, ЕЭК ООН Серия рабочих документов по статистике, Выпуск 9, 2023, с. 1.

տակային, կազմակերպման մակարդակի, ներգրավման եղանակի և օրինականության աստիճանի: Վերջին մի քանի տասնամյակում ՀՀ բնակչությունը ավելի շատ ուղղորդվում է նպատակային էմիգրացիայի ճանապարհով, որի տարատեսակներն են մշտական, ժամանակավոր, սեզոնային և ճոճանակային էմիգրացիաները[1]: Հայ ժողովրդի պատմության ընթացքում էմիգրացիան տարբեր ժամանակաշրջաններում պայմանավորված է եղել վերը նշված բոլոր տարատեսակներով: Խորհրդային միության փլուզումից և Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից ի վեր տեղի ունեցավ հայերի մեծ արտահոսք, որը հիմնականում պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական ծանր դրությամբ, որն առաջացավ 1988թ.-ի ավերիչ երկրաշարժի և Ղարաբաղյան առաջին պատերազմի հետևանքով: Պետությունը դիտարկվող ժամանակահատվածում անհրաժեշտ ռեսուրսների և ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով չկարողացավ սուբսիդավորել և հետամուտ լինել մասնավորեցված կազմակերպությունների շահագործմանը, որոնց զգալի մասը ոչ միայն չշահագործվեցին, այլ նաև վերածվեցին ավերակների:

ՀՀ բնակչության միգրացիայի առանձնահատկությունները իրենց բնույթով նման են մյուս հետխորհրդային պետություններում դիտարկվող միգրացիոն գործընթացներին, որոնց համար հիմնական էմիգրացիոն ուղղությունը Ռուսաստանի Դաշնությունն էր: ՀՀ-ի համար միգրացիոն ուղղություններ դարձան նաև ԱՄՆ-ն և եվրոպական մի շարք երկրներ մշտական բնակություն հաստատելու նպատակով:

Առաջին առանձնահատկություն: 1990-ական թթ.-ի սկզբին արտասահմանից ՌԴ-ում աշխատել են մոտ 100 000 աշխատանքային միգրանտներ տարբեր երկրներից[2], իսկ ներկայումս նրանց թիվը հասնում է 3,5 միլիոնի[3]: Այս ամենի դրական կողմը այն է, որ տնային տնտեսությունները ստանում են դրամական աջակցություն, զարգանում է նաև երկրի տնտեսությունը արտաքին տրանսֆերտների հաշվին: Իսկ բացասական կողմն այն է, որ նման աշխատանքային էմիգրացիայի մեկնող քաղաքացիները ժամանակի ընթացքում չեն կարողանում վերաինտեգրվել ՀՀ-ում առկա աշխատանքային պայմաններին՝ հաշվի առնելով վարձատրության մակարդակը և մարդկանց մոտ ձևավորված մի շարք կարծրատիպեր:

---

[1] Троянская М.А., “Миграция населения: понятие, виды и значение для территорий” // Azimuth of Scientific Research: Economics and Administration, 2021, Том 10, № 2(35), с. 357.

[2] Россия-2000 // под ред. Н. М. Римашевской, Москва, ИСЭПН РАН, 2001, с. 119.

[3] Микрокредитная компания ООО «Корона». Электронный источник: https://koronapay.com/about/blog/skolko-v-rossii-migrantov/.

Աղյուսակ 1

ՀՀ ժամանածների և մեկնածների դինամիկան (մարդ)[1]

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Իմիգրացիոն դեպքերի տարեկան թիվը	10 600	8 200	9 200	10 100	12 100	10 800	10 120	15 400
Իմիգրացիայի տարեկան աճը,%	-	77.4	112.2	109.8	119.8	89.3	93.7	152.2
Էմիգրացիոն դեպքերի տարեկան թիվը	36 500	33 000	33 200	28 386	27 500	7 400	14 239	9 320
Էմիգրացիայի տարեկան աճը,%	-	90.4	100.6	85.5	96.9	26.9	192.4	65.5
Միգրացիայի մնացորդ	***-25 900***	***-24 800***	***-24 000***	***-18 286***	***-15 400***	***3 400***	***-4 119***	***6 080***

2015-2022թթ.-ի ընթացքում էմիգրացիոն դեպքերի տարեկան թիվը նվազել է՝ շուրջ 75%-ով, փոխարենը աճել է իմիգրացիոն դեպքերի տարեկան թիվը՝ շուրջ 45%-ով: ՌԴ-ի նկատմամբ միջազգային սանկցիաների կիրառումը հանգեցրեց ռուբլի-դրամ փոխարժեքի իջեցմանը (2015թ. դեկտեմբերի 31՝ 6.62 դրամ, 2016թ. դեկտեմբերի 31՝ 7.88 դրամ, 2017թ. դեկտեմբերի 31՝ 8.4 դրամ, 2018թ. դեկտեմբերի 31՝ 6.97 դրամ, 2019թ. դեկտեմբերի 31՝ 7.77 դրամ, 2020թ. դեկտեմբերի 31՝ 7.02 դրամ, 2021թ. դեկտեմբերի 31՝ 6.42 դրամ, 2022թ. դեկտեմբերի 31՝ 5.59 դրամ[2]), որը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն 12.44 դրամ էր, այսինքն՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն արժեզրկվել է շուրջ 55%-ով: 2020թ.-ից ՀՀ-ում տեղի ունեցավ տնտեսական կյանքի աշխուժացում (մեծամասամբ շինարարության և տնտեսության այլ ճյուղերի զարգացմամբ պայմանավորված), որը նպաստեց հայ էմիգրանտների մի մասի ՀՀ-ում մնալուն և աշխատելուն, քանի որ ՌԴ-ում և ՀՀ-ում վարձատրության մակարդակների մեջ նախկինում առկա տարբերությունը գնալով նվազում էր: Հայ բնակչության հայրենիք վերադառնալուն նպաստեցին նաև կորոնավիրուսի համաճարակը և ռուս-ուկրաինական պատերազմը: Ռուս հետազոտողները նշում են, որ ճգնաժամի ժամանակ միգրանտները Ռուսաստանի Դաշնության բնակչության սոցիալ-ժողովրդագրական ամենախոցելի խմբերից էին[3]:

---

[1] Հաշվարկների իրականացման համար հիմք է հանդիսացել «Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն», ԱՎԾ, Երևան, 2023, էջ 135: Աղբյուրը՝ https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf:

[2] Հաշվարկների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԲ կողմից հրատարակված տվյալները: Աղբյուրը՝ https://www.cba.am/EN/SitePages/ExchangeArchive.aspx

[3] Денисенко М.Б., Мукомель В.И., “Трудовая миграция в России в период коронавирусной пандемии” // Демографическое обозрение, 2020, Том 7, № 3, с. 90.

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ ՀՀ ֆիզիկական անձանց անունով ստացված դրամական փոխանցումների ահռելի մասը բաժին է ընկնում ՌԴ-ին:

Աղյուսակ 2

ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումների ներհոսքերի կառուցվածքը ՀՀ համախառն ներհոսքերում (մլն. դրամ)[1]

Տարեթիվ	ՌԴ-ից ներհոսքեր	Համախառն ներհոսքեր	Տեսակարար կշիռը
2013	707 300	942 877	75%
2014	644 241	881 102	73%
2015	482 155	780 117	62%
2016	429 938	735 616	58%
2017	513 416	847 137	61%
2018	507 166	862 394	59%
2019	506 407	939 943	54%
2020	403 820	902 409	45%
2021	433 942	1 058 232	41%
2022	1 505 526	2 193 554	69%
2023	1 428 979	2 043 324	70%

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ վերը թվարկված մի շարք հանգամանքներով պայմանավորված ՌԴ-ն որպես էմիգրացիոն ուղղություն կորցրեց իր գրավչությունը, քանի որ ռուբլին սկսեց արագ արժեզրկվել և ստացված աշխատավարձը շատ քիչ էր տարբերվում ՀՀ-ում ստացված վարձատրության մակարդակից: 2012թ.-ին ՌԴ-ում ռուս աշխատողների համար հաշվարկված միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 26 629 ռուբլի, իսկ 2017թ.-ին՝ 39 167 ռուբլի, իսկ մինչ այդ օտարերկրացի աշխատողների համար 2012 թ.-ին աշխատավարձը եղել է 19 766 ռուբլի, իսկ 2017թ.-ին՝ 30 100 ռուբլի[2]: ՌԴ աշխատանքային շուկայում մեծացավ Միջին Ասիայի պետություններից ժամանող միգրանտների հոսքը, ովքեր, ի տարբերություն հայերի, նույն աշխատանքը կատարում էին ավելի ցածր վարձատրության դիմաց: Այդ երկրների շարքում են գտնվում Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը և Ուկրաինան, իսկ ՀՀ-ից աշխատանքի նպատակով ՌԴ մեկնող միգրանտների թվաքանակը

Шустов, А.В., “Циркулярные миграции между Россией и странами СНГ в условиях кризиса: масштабы и последствия” // Вестник Российского университета дружбы народов, Политология, 2020, Том 22, № 3, с. 416.

[1] Հաշվարկների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԲ կողմից հրատարակված տվյալները: Աղբյուրը՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx:

[2] Алешковский И.А., Гребенюк А.А., Кравец В.А., Максимова А.С., “Иностранные мигранты на российском рынке труда: Оценка общей численности и вклада в ВВП России” // Экономические и социальные перемены: факты. тенденции, прогноз, 2019, Том 12, № 6, с. 201.

2016-2019թթ.-ի ընթացքում փոփոխության չի ենթարկվել: Վերը թվարկված երկրներում այս առումով աճ է գրանցվել[1]:

Երրորդ առանձնահատկությունն այն է, որ 2022թ.-ի դրությամբ ՀՀ-ից աշխատանքային կամ այլ նպատակով էմիգրացիայի մեկնող քաղաքացիների խմբերը սկսել են երիտասարդանալ: Եթե 2010թ.-ի դրությամբ մինչև 0-19 և 20-49 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները կազմում էին ՀՀ-ից մեկնողների և վերադարձողների համապատասխանաբար 26.8% ու 22.6% և 47.8% ու 51.9%, իսկ 2022թ.-ի դրությամբ մինչև 15-29 և 30-49 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները կազմել են ՀՀ-ից մեկնողների և վերադարձողների համապատասխանաբար 56.8% ու 27.4% և 54.1% ու 28.9%[2]: ՀՀ-ում էմիգրանտների շրջանում իրականացված հարցումները ցույց են տվել, որ առկա է ուղիղ կապ հայ էմիգրանտների տարիքի և հայրենիք վերադառնալու նրա մտադրության միջև՝ մինչը 20 և 20-29 տարեկան խմբերի էմիգրանտների համապատասխանաբար 75.5%-ը և 67.1%-ը չեն ցանկանում վերադառնալ հայրենիք[3]: Այս խմբերի ներկայացուցիչները գտնվում են միջինից աղքատ ֆինանսական վիճակում: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ աշխատանքային էմիգրացիան ՀՀ-ից դեպի ՌԴ դեռևս չի կորցրել իր գրավչությունը, սակայն ռիսկային է այնքանով, որ 15-29 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները, դեռևս ընտանիք կազմած չլինելով հանդերձ, կարող են այլևս հետ չվերադառնալ՝ հաշվի առնելով նրանց համար ՀՀ-ում աշխատանք չգտնելու հանգամանքը: Նշվածը ՀՀ-ի համար վտանգավոր է նաև դեմոգրաֆիական տեսանկյունից:

---

[1] Гаева А., “Международная миграция на постсоветском пространстве: современное состояние и прогнозы” Рисунок 9, Научно-аналитический журнал Обозреватель - Observer, 2021, с. 96.

[2] Հաշվարկների համար հիմք է հանդիսացել «Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն», 2010թ. և 2022թ.:

[3] Մաթևոսյան Զ. և ուրիշներ, «Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ», («Ամբերդ» մատենաշար) // Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան, Տնտեսագետ, Երևան, 2014թ., էջ 46:



Գծապատկեր 1. **2022թ.-ի դրությամբ մեկնած և չվերադարձած բնակչության տոկոսային հարաբերակցությունը ըստ երկրների**[1]

Չորրորդ առանձնահատկությունն այն է, որ ՀՀ բնակչությունը ՌԴ մեկնում է հիմնականում աշխատանքային էմիգրացիայի նպատակով (մեկնում են նաև բնակություն հաստատելու նպատակով), իսկ դեպի ԱՄՆ և եվրոպական երկրներ՝ մշտական բնակություն հաստատելու: Վերջին ուղղությամբ մեկնում են ոչ միայն երիտասարդները և նոր ստեղծված ընտանիքները, այլ նաև արդեն կայացած և բարձր որակավորում ունեցող մասնագետները, ովքեր արտերկրում ավելի բարձր են վարձատրվում: Այս միտումը ՀՀ-ում եղել է դեռևս 1990-ական թթ.-ից սկսած, իսկ զարգացած աշխարհում այն սկսվել է 19-րդ դարի կեսերից և առավել մեծ թափ հավաքել 20-րդ դարում: Նույնիսկ ուսման նպատակով մեկնողների մեծ մասը չեն ցանկանում վերադառնալ հայրենիք: Երկրից հեռանում է ոչ միայն գիտության, կրթության, տնտեսության զարգացման ներուժ ունեցող բնակչությունը, այլ նաև բնակչության վերարտադրողական հատկանիշներով օժտված խումբը՝ տարբեր երկրներում ձևավորելով հայկական համայնքներ:

Հինգերորդ առանձնահատկությունն այն է, որ ՀՀ-ն, հանդիսանալով փոքր աշխատանքային շուկա ունեցող երկիր, թույլ է տվել օտարերկրյա (այդ թվում հնդիկ միգրանտներին) մուտք գործել ՀՀ աշխատանքային շուկա առանց նրանց քանակը կարգավորող գործիքների կիրառման: Այն կարճաժամկետ հեռանկարում կաշխուժացնի ՀՀ տնտեսությունը, քանի որ մասնավոր հատվածի աշխատուժի գծով ծախսերը կնվազեն, քանի որ հնդիկ միգրանտները հանդիսանում են էժան աշխատուժ, իսկ երկարաժամկետ հեռանկարում ՀՀ-ում կստեղծվի թեժ մրցակցության բնակչության աղքատ խավի և օտարերկրյա միգրանտների

[1] Գծապատկերը կազմված է «Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի» «Միգրացիա» ենթաբաժնի (Մաս 7) 2023թ.-ի տվյալների հիման վրա: Աղբյուրը՝ https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf:

միջև: ՀՀ-ի կողմից այս քայլի իրականացումը ՀՀ բնակչության վրա կարող է թողնել առավել բացասական հետևանքներ, քան մինչ այդ առկա էր: Այն կխթանի առավել մեծ ծավալներով արտագնա աշխատանքի մեկնմանը, քանի որ այն աշխատանքի դիմաց ստացվող վարձատրությունը, որը նախկինում բավականացնում էր հոգսերը հոգալու համար, ներկայումս արդեն չի բավարարում աշխատանքային շուկայում ավելի էժան աշխատողների ի հայտ գալու պատճառով:

Վեցերորդ առանձնահատկությունն այն է, որ ՀՀ-ն անկախության առաջին իսկ տարիներից լարված հարաբերությունների մեջ է գտնվում Թուրքիայի և Ադրբեջանի հետ, իսկ վերջինիս հետ տեղի ունեցած երկու պատերազմները, ընթացիկ պատերազմական գործողությունները և Արցախի հայաթափումը նպաստեցին հայ բնակչության արտագաղթին:

Վերը թվարկվածները հանդիսանում են ՀՀ բնակչության միգրացիայի առանձնահատկությունները, որոնք ձևավորվել և իրենց հետք են թողել ՀՀ տնտեսության, մշակույթի և բնակչության աշխարհայացքի ձևավորման վրա: Վերը նշված առանձնահատկությունները կարևոր են պետության միգրացիոն քաղաքականությունը մշակման առումով: Հայրենական գրականությունում նշվում է, որ վերջինիս մեթոդները թույլ են տալիս ներգրավել ոչ միայն ժամանակավոր միգրանտներին, այլև երկրի տնտեսության մեջ դրամական միջոցների ներդրումներ կատարող միգրանտներին՝ իրականացնելով ներդրումների և կապիտալի խելամիտ տեղաբաշխում երկրի ներսում[1]:

Գիտական նորույթ: Հոդվածում իրականացված ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ բնակչության մի մասի համար աշխատանքային էմիգրացիան հանդիսանում է ֆինանսական եկամուտների հիմնական աղբյուր, իսկ, մյուս կողմից, ՀՀ բնակչության կողմից աշխատանքային էմիգրացիայի մեկնելուն ուղղված գործընթացները, կախված արտաքին գործոնների ազդեցությունից, ապագայում կարող են ստեղծել ոչ միայն ֆինանսական եկամուտներ վաստակելու դժվարություններ, այլ նաև ՀՀ-ում հայ ազգաբնակչության անապահով խավի համար առաջացնել աշխատանք գտնելու բարդություններ օտարերկրյա աշխատանքային միգրանտների թվաքանակի ավելացմանը զուգընթաց:

Եզրակացություն: ՀՀ բնակչությունը արտերկիր աշխատանքային էմիգրացիայի է մեկնում մեծամասամբ գործատուի հետ բանավոր պայմանավորվածությունների հիման վրա: Սրա ռիսկային կողմը այն է, որ միգրանտը չի կարող ունենալ երաշխիքներ արտերկրում հաշվառման համար իրականացվելիք ծախսերի, աշխատավարձերի ժամանակին կամ սահմանված չափով ստանալու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային տարածաշրջանում բացակայում են կամ էլ իրենց ամբողջ իրավասությունների շրջանակում չեն գործում աշխատանքային արհմիությունները: Ցանկացած երկիր, այդ թվում՝ ՀՀ-ն, պետք է ունենա աշխատանքային միգրացիայի հետ

[1] Աթոյան Կ. Լ., «Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» // «Տնտեսագետ», Երևան, 2015թ., էջ 128:

կապված հարցերով զբաղվող կազմակերպություններ կամ պետական մարմիններ, որոնք պետք է ուսումնասիրեն աշխատանքային շուկայի առաջարկի և պահանջարկի համար համապատասխան մասնագետների որակավորման մակարդակը և քանակի առկայությունը: Նման կազմակերպությունները կամ պետական մարմինները կարող են համակարգել յուրաքանչյուր աշխատանքին համապատասխան որակավորված մասնագետ գտնելու գործընթացը, կարգավորել ինչպես տվյալ երկրում, այնպես էլ այդ երկրից դուրս միգրանտների քանակը, նպաստել նրանց աշխատանքի և տվյալ երկրում հաշվառման հետ կապված օրենսդրական հարցերի առավել արագ և անխոչընդոտ կարգավորմանը, կառավարել տվյալ երկրի աշխատանքի շուկայի առաջարկի և պահանջարկի հետ կապված ռիսկերը, նպաստել մասնագետների վերապատրաստմանը, որը կարելի է իրականացնել մասնավոր-պետական հատվածների համագործակցության միջոցով: Ներկա ժամանակաշրջանում ՀՀ-ին անհրաժեշտ է իր ներքին աշխատանքային շուկան ապահովել հայազգի աշխատողներով: 2015-2017թթ.-ին Համաշխարհային բանկի տվյալներով միգրանտների մոտ 30 տոկոսը «շատ վատ» վիճակում, 33 տոկոսը՝ «վատ» վիճակում և 35 տոկոսը՝ «միջին» վիճակում գտնվող տնային տնտեսություններից է[1]: Նշված ժամանակից ի վեր այս պատկերը էական փոփոխության չի ենթարկվել:

Արտերկրից ՀՀ դրամական փոխանցումները ստացումը տնային տնտեսությունների կողմից օգտագործվում են սպառման և սոցիալական վիճակի բարելավման նպատակով: Դժվար է գնահատել պետության և բնակչության համար այդ փոխանցումների օգտագործման արդյունքում առաջացած օգտակարություն աստիճանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աթոյան Կ. Լ., «Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում»//«Տնտեսագետ», Երևան, 2015թ., 304 էջ:
2. Ասատրյան Շ., «Աշխատանքի շուկան և զբաղվածության խնդիրները ՀՀ-ում» // «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2017թ., 7-8(203-204), էջեր 81-83:
3. Խոջաբեկյան Վ., «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» // ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», Երևան, 2002թ., 526 էջ:
4. Ղարագյոզյան Մ., «Միգրացիայի դրդապատճառները և սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում» // «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ հրատարակչություն», Երևան, 2014թ., 2(34), էջեր 20-28:

[1] Օնորատի Մ., Կեշբաումեր Ֆ., Յի Ս., «Հայաստան. Աշխատուժի միջազգային շարժունակության ավելի լավ ըմբռնումը», Քաղաքականության ամփոփագիր, Համաշխարհային բանկ, 2019, էջ 5:

5. Մաթևոսյան Զ. և ուրիշներ, «Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ», («Ամբերդ» մատենաշար) // Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան, Տնտեսագետ, Երևան, 2014թ., 80 էջ:
6. Օնորատի Մ., Կեշբաումեր Ֆ., Յի Ս., «Հայաստան. Աշխատուժի միջազգային շարժունակության ավելի լավ ըմբռնումը», Քաղաքականության ամփոփագիր, Համաշխարհային բանկ, 2019, 18 էջ:
7. Акрамов Ш.Ю., Акрамов Ф.Ш., “Миграционная сфера в период цифровой трансформации государственных услуг и внедрения суперсервисов”, ЦИТИСЭ, 2022, № 3, сс. 70-82.
8. Алешковский И.А., Гребенюк А.А., Кравец В.А., Максимова А.С., “Иностранные мигранты на российском рынке труда: Оценка общей численности и вклада в ВВП России” // Экономические и социальные перемены: факты. тенденции, прогноз, 2019, Том 12, № 6, сс. 197–208.
9. Гаева А., “Международная миграция на постсоветском пространстве: современное состояние и прогнозы” Рисунок 9, Научно-аналитический журнал Обозреватель - Observer, 2021, с. 96. сс. 87-103. Электронный источник: https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnaya-migratsiya-na-postsovetskom-prostranstve-sovremennoe-sostoyanie-i-prognozy/viewer.
10. Денисенко М.Б., Мукомель В.И., “Трудовая миграция в России в период коронавирусной пандемии” // Демографическое обозрение, 2020, Том 7, № 3, сс. 84-107.
11. Козлов Д.Т., Ханина А.В., “Анализ влияния миграционных потоков на национальную экономику (на примере Российской Федерации, стран Закавказья и Средней Азии)” // Экономические отношения, 2023, Том 13, № 2, сс. 355–372.
12. Красинец, Е.С., “Иностранная рабочая сила на российском рынке труда: проблемы и решения” // Народонаселение, 2020, Том 23, № 1, сс. 104–118.
13. Министерство финансов Украины. Электронный источник: https://minfin.com.ua/2023/01/19/99274157/:
14. Россия-2000 // под ред. Н. М. Римашевской, Москва, ИСЭПН РАН, 2001, 312 с.
15. Троянская М.А., “Миграция населения: понятие, виды и значение для территорий” // Azimuth of Scientific Research: Economics and Administration, 2021, Том 10, № 2(35), сс. 356-360.
16. Цапенко И.П., “Межстрановая мобильность населения в период и после эпидемического шока” // Социально-трудовые исследования, 2020, № 40(3), сс. 31–43.
17. Шустов, А.В., “Циркулярные миграции между Россией и странами СНГ в условиях кризиса: масштабы и последствия” // Вестник Российского университета дружбы народов, Политология, 2020, Том 22, № 3, сс. 415–427.

18. Эрм А., Пулен М., “Совершенствование статистики населения и миграции в Армении - текущая ситуация, планы на будущее и способы улучшения”, ЕЭК ООН Серия рабочих документов по статистике, Выпуск 9, 2023, 46 с.
19. “Continued effectiveness of the Organization in view of the new challenges”: Doc. MC/1631 / Intergovernmental Committee for Migration. Geneva, 1989, pp. 12-14. Վերջին մուտք՝
20. Ravenstein E. G., “The laws of migration” // Journal of statistical society of London, Blackwell publishing for the Royal statistical society, Vol. 48, № 2, 1885, pp. 167-235. Electronic source: https://www.academia.edu/22451640/The_Laws_of_Migration_BY_E_G_Ravenstein
21. «Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն», ԱՎԾ, Երևան, 2023, էջ 135: Աղբյուրը՝ https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf: Վերջին մուտք՝ 03.04.2024թ.:
22. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ: Աղբյուրը՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx: Վերջին մուտք՝ 03.04.2024թ.:
23. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ: Աղբյուրը՝ https://www.cba.am/EN/SitePages/ExchangeArchive.aspx: Վերջին մուտք՝ 03.04.2024թ.:
24. Микрокредитная компания ООО «Корона». Электронный источник: https://koronapay.com/about/blog/skolko-v-rossii-migrantov/. Последний доступ: 03.04.2024.

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գևորգ Հովիկի Մարտիրոսյան

Համառոտագիր: Այսօր միգրացիոն գործընթացները հիմքում ընկած են այնպիսի խնդիրներ է, որն առնչվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներին: Պետությունը, հանդիսանալով սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորմամբ զբաղվող մարմին, պետք է կարգավորի և վերահսկի միգրացիոն գործընթացները: Աշխատանքային էմիգրացիայի մեկնող մեր հայրենակիցները մեծամասամբ որակական առումով վարում են միջինից ցածր ապրելակերպ: ՀՀ բնակչության միգրացիայի հետ կապված խնդիրները լուծելու համար շատ կարևոր է ուշադրություն դարձնել միգրացիոն գործընթացների առանձնահատկություններին և դրանց ձևավորման պատճառներին:

Թեման **արդիական** է և **նպատակ** ունի բացահայտել այն ռիսկերն ու հնարավորությունները, որոնք կարող են ազդել պետական միգրացիոն քաղաքականության մշակման վրա: Հոդվածում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**. ուսումնասիրել ՀՀ բնակչության հիմնական էմիգրացիոն ուղղությունները և աշխատանքային էմիգրացիայի արդյունքում ստացված դրամական փոխանցում-

ները: Հոդվածում օգտագործվել են տարբեր երկրներում միգրանտների համար իրականացված մարդահամարի տվյալներ, իսկ մեր կողմից օգտագործված տվյալների հավաքագրման, համեմատման և վերլուծական **մեթոդները** օգնել են հասնել հոդվածում առաջադրված նպատակներին:

Հետազոտության արդյունքում ստացված **գիտական նորույթը** փաստում է, որ ՀՀ բնակչության մի մասի համար աշխատանքային էմիգրացիան հանդիսանում է ֆինանսական եկամուտների հիմնական աղբյուր, իսկ, մյուս կողմից, ՀՀ բնակչության կողմից աշխատանքային էմիգրացիայի մեկնելուն ուղղված գործընթացները, կախված արտաքին գործոնների ազդեցությունից, ապագայում կարող են ստեղծել ոչ միայն ֆինանսական եկամուտներ վաստակելու դժվարություններ, այլ նաև ՀՀ-ում հայ ազգաբնակչության անապահով խավի համար առաջացնել աշխատանք գտնելու բարդություններ օտարերկրյա աշխատանքային միգրանտների թվաքանակի ավելացմանը զուգընթաց:

Բանալի բառեր. միգրացիա, աշխատանքային շուկա, միգրանտ, դրամական փոխանցում, տնտեսություն, էմիգրանտ, տնային տնտեսություն, ֆինանսական եկամուտ:

ОСОБЕННОСТИ МИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ РА

Геворг Овикович Мартиросян

Аннотация. Сегодня в основе миграционных процессов лежат проблемы, связанные с социальной, экономической и политической сферами. Государство, являясь органом, занимающимся регулированием социально-экономических проблем, должно регулировать и контролировать миграционные процессы. Большинство наших соотечественников, выезжающих в трудовую миграцию имеют качество жизни ниже среднего. Для решения проблем, связанных с миграцией населения РА, очень важно обратить внимание на особенности миграционных процессов и причины их формирования. Тема **актуальна** и **направлена** на выявление рисков и возможностей, которые могут повлиять на развитие государственной миграционной политики. В статье были представлена следующая **задача**: изучить основные направления эмиграции населения РА и денежные переводы, полученные в результате трудовой эмиграции.

В статье использованы данные переписи мигрантов в разных странах, а использованные нами **методы** сбора, сравнения и анализа данных помогли достичь поставленных в статье целей.

Полученная в результате исследования **научная новизна** доказывает, что трудовая эмиграция является основным источником финансовых доходов части населения РА, а с другой стороны, процессы, направленные на выезд населения РА в трудовую эмиграцию, в зависимости от воздействия внешних факторов, могут создать не только трудности с заработком в будущем, но и вызвать трудности в

трудоустройстве уязвимого класса армянского населения РА наряду с увеличением числа иностранных трудовых мигрантов.

Ключевые слова: Миграция, рынок труда, мигрант, денежные переводы, экономика, эмигрант, домохозяйство, финансовые доходы.

CHARACTERISTICS OF POPULATION MIGRATION IN RA

Gevorg Hovik Martirosyan

Abstract. Today, migration processes are based on issues related to social, economic, and political spheres. Migration processes are the response of the population to adapt to the rapid processes of globalization. The state, being a body dealing with the regulation of socio-economic issues, must regulate and control migration processes. Most of our compatriots who leave for labor migration lead a below-average quality of life. In order to solve the problems related to the migration of the population in RA, it is very important to pay attention to the features of migration processes and the reasons for their formation.

The topic of this study is relevant not only for RA but also at the global level. As a result of studying the specifics of migration processes, it will be possible to make the risks in the labor market manageable and take steps toward the prevention of natural migration. **The aim** of this article is to study the peculiarities of population migration in the RA, and based on the results, to identify the risks and opportunities that determine the development of the state migration policy. To achieve that goal, the following tasks were set: to study the main migration directions of the RA population and remittances received from labor migration. In the scope of the research census data for migrants in different countries was used, and the methods of data collection, comparison, and analysis were implemented.

The scientific novelty obtained as a result of the research proves that labor migration is the main source of financial income for a part of the RA population, and the labor migration of the RA population, depending on the influence of uncertain external factors, may have some obstaclesin near future, which in its turn will create difficulties for employment and creating incomes in abroad for segments of RA population described by marginal place of residence and poverty.

Keywords: Migration, labor market, migrant, remittance, economy, emigrant, household, financial income.